Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 01 (404) 1-31 հունվար, 2017թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Թոթափենք ստրկամտությունը

Յուրաքանչյուր պետական համակարգ քաղաքական առումով կարիք ունի պաշտպանության: Պաշտպանություն՝ նախ եւ առաջ արտաքին ներթափանցումներից, ապա ներքին ցնցումներից խուսափելու համար: Ռազմական ոլորտում վաղուց ապացուցված է, որ ուժի կենտրոնացումը մանավանդ քիչ ռեսուրս ունեցող համակարգերում կարող է աղետաբեր լինել եւ անցանկալի հետեւանքներ ունենալ: Հայ ժողովրդի պատմության մեջ այս իրականությանն ականատես ենք եղել. հիշենք Վարդանանց ու Վահանանց պատերազմները եւ արդյունքները: Ավարայրի դաշտում գործնական պարտությունը ի վերջո Նվարսակի դաշնագրով վերածվեց համեմատական հաղթականի: Նույն իրողությանն ականատես ենք եղել նաեւ պատմության քաղաքական ոլորտում՝ Արցախի մելիքությունների պարագայում, երբ մելիքներն ունեցել են ապակենտրոն իշխանական համակարգ եւ կարողացել են փաստորեն պահել համեմատական ավելի ինքնիշխան կարգավիճակ: Թե՛ ռազմական եւ թե՛ քաղաքական ասպարեզներում ուժի կենտրոնացվածությունը ռիսկային տարրեր է պարունակում:

Հենց այդ սկզբունքից ելնելով է, որ աշխարհում այսօր ապակենտրոնացված կառավարման համակարգերն առավել արդիական են եւ գործնականում համարվում են հաջողված ու արդյունավետ:

Պետական համակարգում պատասխանատվության լայնորեն բաշխումը ենթադրում է յուրաքանչյուր պետական օղակի պատասխանատվության բաժնի հատկացում: Պատասխանատվության հանձնումը համակարգի որեւէ օղակի՝ տվյալ մասնիկի մոտ առաջ է բերում հանձնառության զգացում: Իսկ երբ հանձնառու ես որեւէ գործի կատարման ուղղությամբ, պարտավոր ես պաշտպանել արածիդ իրավականությունն ու ճշմարտացիությունը:

Գալով մեր իրականությանը, փաստենք, որ խորհրդային կարգերից ժառանգված համակարգը գերկենտրոնացված է եղել: Չնայած այն հանգամանքին, որ խորհրդային հանրապետությունների սահմանադրությունները լայն իրավասություններ էին շնորհել խորհուրդներին, սակայն կոմունիստական կուսակցական ամենազորության մտայնությունն ու «հարցեր լուծելու» գործնական փորձը առ ոչինչ էին դարձնում թղթի վրայի օրենքները: Խորհրդային համակարգից ժառանգած հոգեբանությունը շարունակվում է մեր օրերում եւս տիրական մնալ: Չնայած նրան, որ բավականին բարձր գնով՝ արյամբ ենք նվաճել մեր երկրում ինքնիշխանության կայացման իրավունքը, սակայն ստրկամտության՝ «վերեւի կենտրոնացված ուժի» ամենազորության պատրանքը այդպես էլ չենք կարողացել թոթափել մեր մտայնությունից: Եվ հենց այդ պատճառով ոչ կարողանում ենք լիարժեք պաշտպանված լինել եւ ոչ էլ ունենալ իրական ինքնիշխանություն:

Պետության ինքնիշխանությունը կարող է իրական դառնալ միայն այն պարագայում, երբ համակարգի յուրաքանչյուր մասնիկի մոտ անկախության մտայնությունը արմատավորած է: Իսկ անկախությունը «վերեւի կենտրոնացված ուժի» բացառմամբ միայն կարելի է արմատավորել:

Հայոց բանակը

Հունվարի 28-ը Հայոց բանակի ծննդյան օրն է: Նորաստեղծ հանրապետության զինված ուժերը ծնվեցին կռվի դաշտում, հընթացս մարտական մկրտություն անցնող կամավորական ջոկատների հիմքի վրա: Հայոց պետական բանակը երկար ժամանակ դեռ պիտի կրեր կամավորական իր թթխմորի ազդեցությունը: Նորաստեղծ պետական բանակը ձեւավորվեց խորհրդային բանակից կամավորապես հայրենիք վերադարձած արհեստավարժ սպաների, բայց հիմնականում պատերազմի դպրոցն ավարտած կամավորականների ուժերով: Չժխտելով խորհրդային զորքերից վերադարձածների վաստակը, այնուամենայնիվ՝ նրանք գործող կամավորական-պետական զորամիավորումների հետ ներդաշնակվելու խնդիր ունեին, իսկ մյուս կողմից իրենց թվաքանակով որակ չէին կարող կազմել ինքնաբուխ ձեւավորված հավաքականության մեջ: Որակ կազմող նախկին ֆեդայի-կամավորներն էլ զորամիավորումներ ղեկավարողի, դաստիարակի, հոգեբանի, գրքային գիտելիքով զինված արհեստավարժի կայացման ճանապարհով պիտի տանեին իրենց ենթակա նորակոչիկ պետական զինվորին՝ մինչ առկա ներուժը կհամալրվեր հայկական ռազմական դպրոցի շրջանավարտ սպայական սերնդով: Մեր բանակը դժվարին կայացման ճանապարհ անցավ՝ մշտապես քթի տակ զգալով վառոդի հոտը եւ հակառակորդի դավադիր շունչը: Դիմագրավելիք բոլոր մարտահրավերներով հանդերձ՝ հայ սպան ու զինվորը մշտապես կրողը եղան հոգեբանական ու բարոյական այն ամուր գիտակցության, որ հաղթած եւ հայրենիք ազատագրած նախորդների գործի շարունակողն են:

Ինքնախաբեություն կլինի մտածել, թե հասարակությանը մաս կազմող բանակը կարող է անհաղորդ լինել այդ հասարակության բարքերին եւ արատներին: Մյուս կողմից՝ վտանգավոր մեղք է բանակը ներքաշել ներհասարակական եւ ներքաղաքական խնդիրների ու հակասությունների դաշտ, ինչի ականատեսը եղանք նաեւ 2016 թվականի ապրիլի քառօրյա փորձության ժամանակ: Այն պահին, երբ զինվորը չէր լքում մահվանն ընդառաջ գնացող հրամանատարին, իսկ հրամանատարը զոհաբերում էր իրեն՝ փրկելու համար ենթակային, այն պայմաններում, որ զոհվողների մեկ երրորդը սպաներ էին, բոլորովին ժամանակը չէր խրամատներ հասնող ձայնով գոռալ, թե գեներալները թալանում են բանակը եւ ման են գալիս ջիպերով:

Թեեւ տարիներ շարունակ մեր մտքի միջի կասկածի որդը հասունացնում էր այն որոմը, թե երկրում առկա անարդարությունների պատճառով անհրաժեշտ պահին ոչ բանակը կկռվի ու ոչ էլ նախկին կռվողները զենք կվերցնեն, քառօրյա պատերազմի ժամանակ ե՛ւ 18-20 տարեկան զինվորը կռվեց, ե՛ւ ազգը վերածվեց ազգ-բանակի:

Պետական ու համաժողովրդական այս բանակը դիմագրավեց անակնկալ հարվածը, որի ժամանակ թշնամին դիրքապահների դեմ գրոհի անցավ մեծաքանակ մարդուժով, հայկական դիրքերի վրա նետեց միայն 120 մմ-ից բարձր չափի ավելի քան 30 000 հրետանային արկ, «Գրադ» կայանքներից արձակեց ավելի քան հազար հինգհարյուր արկ: Չնայած մանրակրկիտ նախապատրաստությանը, անակնկալ ու լայնամասշտաբ գրոհին՝ թշնամին չհաղթեց, ունեցավ տեխնիկայի շոշափելի կորուստ եւ, ըստ որոշ աղբյուրների, տասն անգամ ավելի զոհ:

Պատերազմը հարձակվող կողմի խնդրանքով դադարեցվեց չորս օրից, թշնամու ծրագրերը ձախողվեցին, հայկական կողմը չպարտվեց (զերծ մնանք հաղթանակ բառը գործածելուց, որովհետեւ թեկուզ փոքր չափի, այնուամենայնիվ՝ հողի կորուստ ունեցանք): Ճշմարտությունը սա է, եւ այն չպետք է աղավաղվի՝ վասն ներքին հաշիվների կամ իշխանություններին չսիրելու ինքնաարդարացման:

Փաստն այն է, որ՝ չնայած այս ու այն հանգամանքներին, հայկական բանակը մնում է մարտունակ, հայ զինվորը մեռնելուց ավելի սարսափելի է համարում թշնամու առաջ հայկական բնակավայրերի ճանապարհը բացելը:

Թե՛ մարտական գործողությունների ժամանակ եւ թե՛ խաղաղ զորավարժությունների մեջ մեր բանակը դրսեւորում է հաղթողի ժառանգական կապը, ոգին եւ արհեստավարժությունը:

Ավանդույթ է դարձել, որ հայկական սեղանների շուրջ պարտադիր խմվի հայոց բանակի եւ հայ զինվորի կենացը: Այլեւս այդ բանակն ու զինվորը շոշափելի ու կոնկրետ են թե՛ իրենց եւ թե՛ իրենց պաշտպանած հողի մերձությամբ ու հարազատությամբ:

Հայոց բանակն ամենաթանկ բանն է, որ անկախությամբ ձեռք են բերել Հայաստանի ու Արցախի պետությունները՝ այն պարզ գիտակցությամբ, որ ազգի ու պետության անվտանգ ներկան եւ բաղձալի ապագան երաշխավորող գլխավոր գործոնը Հայոց զինված ուժերն են:

Պիտի կարողանանք լինել ազգ-բանակ: Ոչ այն պարզունակ հասկացողությամբ, թե զինվորական ծառայության շրջանակ պետք է ներգրավվեն բոլորը՝ առանց սեռի ու տարիքի խտրության, այլ գործող բանակի առջեւ ֆիզիկական ու բարոյական պարտք ու պարտականություն ունենալու անհատական գիտակցությամբ, ինչը չի կարող սահմանափակվել միայն կենացներ խմելով, եւ այո՛, նաեւ այս երկրում այնպիսի արդար հարաբերություններ հաստատելով, որոնք բարոյական եւ հոգեբանական առումով միշտ ամուր կպահեն սահմանապահ զինվորի ողնաշարը: Խաղաղ լուսաբացներ, անսասան հավատ ու անկոտրուն կամք հայոց բանակին:

«ԴՐՕՇԱԿ»-ի խմբագրական
27.01.2017

Արցախով միավորված Հայաստանն է, որ կարող է զարգացում ապրել

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի ելույթը Լիբանանում, (27 հունվար 2017թ.) Հայ Յեղափոխական Դաշնակցության 126-ամյակի տոնակատարության ժամանակ



Անկեղծ լինենք ու ասենք, որ արդի ժամանակների հաղորդակցության միջոցները, դրանց տարածվածությունը բոլորին հնարավորություն են տալիս ամեն օր հետեւելու մեզ, ամեն օր անդրադառնալու մեր գործին եւ մեր գործունեությանը: Այլ խոսքով՝ մենք բաց գիրք ենք ձեզ համար: Դուք կարող եք ամեն օր կարդալ, քննարկել եւ դատել: Սակայն, խուսափելու համար ընդհանուր խոսակցություններից եւ կրկնություններից, այսօր ես ուզում եմ բացառապես անդրադառնալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջիկա ընտրություններին:

Գուցե զարմանալի լինի, որ այս առումով մեր առաջին ելույթն ունենում ենք Լիբանանում, բայց, հավատում եմ, այս ընտրություններն ունեն համահայկական կարեւորություն, եւ նույնքան որ կարող են հետաքրքրել Հայաստանի ժողովրդին եւ բնակչությանը, կարող են եւ պետք է հետաքրքրեն համայն հայությանը:

Յուրահատուկ պայմաններում են այս ընտրությունները տեղի ունենում. մենք պատերազմական վիճակում ենք դարձյալ: Ամեն օր կարող են լայնամասշտաբ պատերազմական գործողություններ սկսվել: Ինչո՞ւ եմ շեշտում սա: Շեշտում եմ, որովհետեւ ամեն մեկ ընտրություն իր հետ բերում է լարվածություն, եւ ամեն մեկ լարվածություն կարող է ցնցումի վերածվել, իսկ ամեն մեկ ցնցում կարող է արտաքին թշնամու համար նոր ոտնձգության ախորժակ բացել:

Նախ՝ կարեւոր է, շատ կարեւոր, որ Հայաստանի քաղաքական դաշտի պատասխանատուների, առաջին հերթին իշխանության կողմից, ապա նաեւ բոլոր քաղաքական ուժերի կողմից լինի գիտակցություն, որ այս պայքարը, այս մրցակցությունը չպետք է վերածվի թշնամանքի եւ առճակատման:

Երկրորդ՝ ամբողջ տարածաշրջանը վայրիվերումների մեջ է, լարված է վիճակը: Միջազգային ազդեցության դաշտերի բաժանում եւ վերաբաժանում է տեղի ունենում: Այս պայմաններում մեծ է լինում արտաքին միջամտությունների հավանականությունը: Արտաքին միջամտությունները հաճախ տեղի են ունենում՝ներքին խնդիրները պատրվակելով, հաճախ տեղի են ունենում ներքին խնդիրներն օգտագործելով: Այլ խոսքով՝ արտաքին միջամտությունները կարող են մեր երկրում ավելի դերակատար դառնալ՝ հայ մարդուն, հայ քաղաքական ուժը օգտագործելով: Եվ այս առումով եւս մենք ունենք խնդիր, որ այս ընտրությունների ժամանակ չստեղծենք առիթներ ու պատրվակներ արտաքին միջամտության համար:

Երրորդ՝ այս ընտրությունները տեղի են ունենում նոր պայմանների մեջ: Մենք Հայաստանում նոր Սահմանադրություն ենք ընդունել, Սահմանադրություն, որն այս ընտրություններով պետք է իրագործվի, Սահմանադրություն, որն այս ընտրություններով պետք է իրականություն դառնա, Սահմանադրություն, որով համակարգային փոփոխություն է տեղի է ունենում Հայաստանում, Սահմանադրություն, որ պետք է գա՝ արմատախիլ անելու բացասական երեւույթները Հայաստանի քաղաքական կյանքում: Եվ այս ընթացքն է, որ պետք է անխափան լինի: Հետդարձ չպետք է տեղի ունենա:

Մենք, իբրեւ հայկական իրականության մեջ պատասխանատու կազմակերպություն, մասնակցելու ենք այս ընտրություններին: Մասնակցելու ենք՝ ունենալով ելակետային որոշ պայմաններ: Մենք անցած ժամանակաշրջանում համագործակցել ենք թե ընդդիմության հետ, թե իշխանության հետ: Երկու պարագայում էլ այդ համագործակցությունը ինքնանպատակ չի եղել, երկու պարագայում էլ այդ համագործակցությունը եղել է հանուն Հայաստանի եւ մեր կողմից հայտարարված նպատակների: Եվ կարեւորն ինչ է՝ երկու պարագայում էլ նույն նպատակների հայտարարումով է տեղի ունեցել այդ համագործակցությունը: Այլ խոսքով՝ մենք ունենք բոլորի հետ համագործակցելու, աշխատելու հնարավորություն: Մենք կաշկանդված չենք, մենք ազատ ենք այդ առումով, եւ դա, կարծում եմ, կարեւոր հատկանիշ է մեզ համար: Իշխանությունների հետ մեր համագործակցության արդյունքում նոր Սահմանադրություն է ստեղծվել, որի արդյունքում նոր ընտրական օրենսգիրք է ընդունվել, որի հետ համաձայնել են Հայաստանի բոլոր, գրեթե բոլոր քաղաքական ուժերը՝ թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխանական: Մեր համագործակցությամբ դրել ենք մի նոր սկիզբ Հայաստանի պետական կյանքում: Նոր կառավարություն է ձեւավորվել, կադրային լայնամասշտաբ փոփոխություններ են տեղի ունեցել: Իրականության մեջ նոր սկիզբ կա, հույսի դուռ է բացվել, զարգացման կարելիություն է ստեղծվել, մթնոլորտ կա՝ այս առումով: Այս իմաստով՝ առկա է նաեւ մտահոգություն, որ որոշ նախկին պաշտոնյաներ, ինչ-ինչ շահերից ու մտահոգություններից ելնելով, փորձում են համախմբվել, կազմակերպվել, փորձում են ռեւանշի դուրս գալ, որպեսզի այդ հույսը խամրի, որպեսզի վերադարձ տեղի ունենա դեպի անցյալ: Եվ այս առումով ես պետք է հստակ հայտարարեմ՝ հենվելով մեր ժողովրդի վրա՝ մենք ընթանալու ենք հույսի եւ զարգացման ճանապարհով:

Ելակետային հատուկ պայմանների մեջ ենք հայտնվել նաեւ Ընտրական օրենսգրքի առումով, որով առաջին անգամ որդեգրված է 100 տոկոս համամասնական ընտրակարգ, առաջին անգամ կոնսենսուսով՝ համախոհությամբ է ընդունվել, բոլոր քաղաքական ուժերի մասնակցությամբ եւ համաձայնությամբ: Եվ սա մեր տարիների աշխատանքի, պահանջների, առաջարկների ամբողջությունն է, որ Ընտրական նոր օրենսգիրք է դարձել: Սակայն այստեղ պետք է նշեմ, որ այս համակարգի մեջ որդեգրվել է նաեւ ռեյտինգային ընտրակարգ, որի շուրջ մենք այսօր ունենք լուրջ մտահոգություն: Ռեյտինգային տարբերակը լրջորեն վտանգում է համամասնական ցուցակով ընտրությունների էությունը, բայց ընդհանրության մեջ կա առաջընթաց եւ զարգացում:

Ինչպես բոլոր ընտրությունները, այս ընտրություններն էլ ունեն իրենց վտանգավոր կողմերը: Ճիշտ է, որ այս նոր Ընտրական օրենսգրքով գրեթե կամ ամբողջությամբ բացառվել է հնարավորությունը ընտրատեղամասերում կեղծիքներ կատարելու, լցոնումներ անելու, սակայն դեռ մնում են հնարավորությունները փողի, ընտրակաշառքի, լծակների օգտագործման եւ ամբոխավարության առումով: Մենք ի վիճակի չենք այս հնարավորություններն օգտագործել: Մենք փող չունենք ընտրակաշառք բաժանելու, եւ դեմ ենք դրան, մենք լծակներ չունենք մարդկանց վրա ճնշում բանեցնելու, վախեցնելու, ահաբեկելու, հանցագործ աշխարհին մղելու, որ դերակատար դառնա: Մենք այս հնարավորությունները չունենք, եւ լավ է, որ չունենք: Մենք չունենք նաեւ ամբոխավարության հնարավորությունը: 25 տարի է, որ Հայաստանում ենք, եւ չի եղել, որ մի բան հայտարարած լինենք, որն իրագործած չլինենք, չի եղել, որ մի բան հայտարարած լինենք, բայց դրա համար հետեւողական պայքար մղած չլինենք: Մենք վաստակ ունենք, կենսագրություն ունենք, որը 126 տարվա կյանք ունի եւ այս ընտրությամբ էլ ոչինչ չի ավարտվում. մեր ընթացքը պետք է շարունակվի դեպի ապագա: Մենք ամբոխավարության ազատություն չունենք կամ, ավելի ճիշտ, ամբոխավարության համար անհրաժեշտ անպատասխանատվություն չունենք:

Մենք գնում ենք ընտրությունների, որպեսզի Հայաստանի համար ապահովենք համընդհանուր զարգացման կարելիություն:

1. Հայաստանում համընդհանուր զարգացման կարելիություն ստեղծելու համար անհրաժեշտ է արդարություն, անհրաժեշտ է, որ արդարություն հաստատվի: Զարգացման համար անհրաժեշտ է, որ ժողովրդի մեջ միասնականություն լինի: Իսկ եթե մի տեղ անարդարություն կա, այնտեղ կայունություն չի լինի, եթե մի տեղ անարդարություն կա, այնտեղ ազգային միասնականություն չի լինի:

Դաշնակցությունն այն կազմակերպությունն է, որը միշտ եւ ամենուր դեմ է եղել բոլոր տեսակի անարդարություններին՝ անկախ այն բանից, թե այդ անարդարությունն ում կողմից եւ ում դեմ է ուղղված: Եվ, վերջապես, մենք Հայաստանի մեջ գործող միակ քաղաքական ուժն ենք, որ հավատում ենք սոցիալական արդարությանը: Մենք սոցիալիստական կուսակցություն ենք: Այս առումով տարբերվում ենք բոլորից եւ հետամուտ ենք լինելու Հայաստանում սոցիալական արդարության հաստատմանը: Արդար Հայաստանն է, որ կարող է զարգանալ:

2. Ներազգային ճակատում մեզ պետք է համերաշխություն եւ հանդուրժողականություն, մեզ պետք է ազատություն եւ ժողովրդավարություն: Ազատ Հայաստանն է, ժողովրդավար Հայաստանն է, որ կարող է զարգանալ:

3. Հայաստանը, հակառակ որոշների կարծիքին, շատ ավելի անվտանգ է, շատ ավելի մեծ հնարավորություններ ունի զարգանալու Արցախի հետ միավորված: Եվ այն կարծիքը, թե Արցախը խանգարում է Հայաստանի զարգացմանը, մահացու սխալ է: Մահացու սխալ է, որովհետեւ երբեք նահանջը, զիջումը չի կարող բերել զարգացման: Եվ Արցախով միավորված Հայաստանն է, որ կարող է զարգացում ապրել:

4. Պատերազմը չարիք է, բայց պատերազմը կանխելու համար պետք է միշտ պատրաստ լինել պատերազմի: Մեր ունեցած միջոցները սակավաթիվ են, մեր ունեցած հնարավորությունները փոքր են: Մենք պետք է օգտագործենք այնպիսի կազմակերպական վիճակներ, որ մեզ բերեն առավելություններ: Եվ ազգ-բանակ հասկացողությունը կամ համաժողովրդական բանակ հասկացողությունը, որի փորձը հայկական իրականության մեջ առաջին հերթին եւ միայն ունեցել է Դաշնակցությունը: Այո, մենք պարտավոր ենք ազգովի կազմակերպվել իբրեւ բանակ, մենք պարտավոր ենք կազմակերպվել այնպես, որ ամբողջությամբ թեւ ու թիկունք լինենք բանակին: Մենք այլ ելք չունենք: Որպեսզի պատերազմ չունենանք, որպեսզի կարողանանք խուսափել պատերազմից, որովհետեւ դա չարիք է, ազգովի պետք է դառնանք բանակ: Սա է մեր ելքը, մեր փրկությունը: Ուժեղ, հզոր բանակով է, որ Հայաստանը կարող է զարգանալ:

5. Արտագաղթը չարիք է, արտագաղթը մեր երկիրը վտանգելու աստիճան արդեն մտահոգիչ երեւույթ է, սակայն արտագաղթի խնդրում ավելի բացասական երեւույթ է երիտասարդության արտագաղթը: Արտագաղթին տոն տվող պատճառները բազմաշերտ են, բայց այսօրվա իմ խոսքի տրամաբանությունը թույլ չի տալիս, որ բոլոր այդ շերտերին բազմակողմանի անդրադարձ ունենանք: Սակայն կարող եմ մի բան հստակ ասել՝ ամեն տարի շատ երիտասարդներ ավարտում են իրենց զինվորական ծառայությունը եւ դուրս են գալիս կյանքի ասպարեզ: Նրանք իրենց կյանքը կազմակերպելու խնդիր ունեն եւ նրանք առաջին փորձերն անում են Հայաստանում այդ կյանքը կազմակերպելու համար: Եվ, երբ չեն կարողանում, փորձում են արտագաղթել: Իսկ արտագաղթող երիտասարդների հետեւից արտագաղթում են նաեւ ընտանիքները: Մենք պարտավոր ենք, մենք ունենք համապատասխան ծրագիր, որ իբրեւ պետություն պարտավոր ենք ամեն տարի զորացրվող երիտասարդի կողքին կանգնել, որպեսզի նրան ապահովենք արժանավայել աշխատանքով, արժանապատիվ աշխատավարձով եւ օգնենք, որ նա կարողանա Հայաստան հողի վրա իր կյանքը կազմակերպել: Դա հնարավոր ծրագիր է, կարելի ծրագիր է, եւ մենք պետք է հաջողեցնենք դա: Երիտասարդ Հայաստանն է, որ կարող է լինել կենսունակ եւ կարող է ունենալ զարգացում:

6. Ազգային տեսլական ունեցող, նպատակ ունեցող, ուղղություն ունեցող երկիրն է, որ գիտի՝ ինչպես պետք է կազմակերպի եւ ինչպես պետք է իր ժողովրդին ուղղորդի դեպի նպատակային աշխատանք: Ազգային տեսլական, ազգային երազանք՝ ինչ ուզում եք դրեք անունը, պետք է ունենանք մեր ազգային նշանակետը, որին պետք է ձգտենք: Ազգային երազանք ունեցող Հայաստանն է, որ կարող է զարգանալ:

7. Հայաստանում հաճախ են խոսում, որ մենք ուժեղ ենք Սփյուռքի հետ միասին: Ճիշտ է: Ես կասեմ, սակայն, որ այդտեղ անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն եւ կարելիություն, որպեսզի Սփյուռքը իրական մասնակցություն ունենա Հայաստանի զարգացման գործում, Հայաստանի կյանքում: Ստեղծել, օգնել, մղել, որպեսզի Սփյուռքը կարողանա ինքնակազմակերպվել եւ ինքնավերակազմակերպվել, որովհետեւ մեզ պետք է առույգ, աշխույժ, ազգային կազմակերպված Սփյուռք: Դա մեզ համար կարելիություն է եւ հնարավորություն: Եվ Սփյուռքի հետ միավորված է, որ Հայաստանի զարգացումը հնարավոր ու կարելի է:

Նորը չի կարող լիարժեք փոխարինել գործող Սահմանադրությանը

Արցախի հանրապետության նոր սահմանադրության նախագծի, հանրաքվեի հարցերին անդրադառնում է ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Կամո Բարսեղյանը:

- Արցախում փետրվարի 20-ին կայանալու է նոր Սահմանադրության նախագծի հանրաքվեն: Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտություն կա:

- Եթե Սահմանադրության նախագիծը համեմատենք գործող Սահմանադրության հետ, ապա կտեսնենք, որ գործող Սահմանադրությունն իր թերություններով հանդերձ աշխատող Սահմանադրություն է: Թերությունն այն է, որ հստակորեն ամրագրված չեն մեր նորաստեղծ պետության սահմանները: Իմ կարծիքով՝ Սահմանադրության փոփոխության կարիք կար, բայց հարցը նրանումն է, որ նորը պիտի նախկինից ավելի առաջընթաց, ավելի ուժեղ լինի: Նոր Սահմանադրությունը նախկինին լիարժեք չի կարողանալու փոխարինել: Ու, իմ անձնական համոզմունքով, եթե Սահմանադրության նախագիծն անցնի, այն երկար կյանք չի ունենա:

- Նշեցիք, որ նոր Սահմանադրությունը նախկինին չի կարողանալու փոխարինել: Որո՞նք են, Ձեր կարծիքով, Սահմանադրության նախագծի թերությունները:

- Հանրապետության նախագահի եւ Ազգային Ժողովի միաժամանակյա ընտրությունը եւ միաժամանակյա հրաժարումը: Երկրորդն իշխանության գերկենտրոնացումն է նախագահի ձեռքին: Այսինքն, ԱԺ-ն ու հանրապետության նախագահը պիտի հակակշռեն միմյանց: Նոր Սահմանադրությամբ նախատեսվում է իշխանութան թեւերից մեկի խիստ ուժեղացում, որը նորմալ չեմ համարում:

Բացի դրանից, Արցախի սահմանները հստակորեն չեն նշվում: 1990-ական թթ. վերջերին ԱԺ-ի որոշումով վարչատարածքային բաժանումներ են կատարվել, իսկ Սահմանադրության նախագծում ճիշտ կլիներ հղում կատարել այդ որոշմանը, որպեսզի հստակ լինի, թե որոնք են մեր պետության սահմանները:

Նաեւ ՏԻՄ ընտրությունների գաղափարը նոր Սահմանադրության նախագծի տեքստում հստակորեն չի նշվում: Արտացոլված չէ տեղական ինքնակառավարման համակարգի առաջընթացի գաղափարը:

- ՀՀ-ում նոր Սահմանադրությամբ խորհրդարանական կառավարման համակարգն է ընդունվել: Տրամաբանական չէ՞ր լինի արդյոք, որ Արցախում եւս նույն համակարգը լիներ:

- Մենք Հայաստանի Հանրապետության հետ գտնվում ենք նույն իրավական, տնտեսական դաշտում, միշտ էլ ձգտել ենք միանալ Մայր հայրենիքին. անկախությունը միջանկյալ կարգավիճակ է՝ մինչեւ միասնական, հզոր պետություն ունենալը: Այս հանգամանքներից ելնելով՝ խիստ անհրաժեշտ է, որպեսզի նույն օրենսդրական դաշտում հանդես գանք: Ու նոր Սահմանադրության անհրաժեշտությունը հիմնավորել «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգավիճակով՝ այնքան էլ ճիշտ չէ: Այսօր, փաստորեն, Հայաստանի Հանրապետությունը եւս պատերազմական վիճակում գտնվող երկիր է:

- Ստեղծված իրավիճակում արդյո՞ք չի պառակտվելու հասարակությունը:

- Յուրաքանչյուր ոք պետք է ինքն իրեն հարց տա, թե ինչու՞մն է կայանում Սահմանադրության նախագծի առավելությունը գործող Սահմանադրության նկատմամբ, եւ ըստ այդմ էլ կողմնորոշվի՝ կողմ, թե՞ դեմ քվեարկել:

Ցավոք սրտի, մարդկային եւ տարածքային առումով փոքր պետություն ենք: Կարեւորը մեր ժողովրդի միասնականությունն է: Մեր ժողովուրդն ունի գերնպատակ՝ միացում Մայր հայրենիքն հետ, ունենք ագրեսիվ հարեւան ու տվյալ պարագայում ամեն մի կուսակցություն պետք է իր ներքին տարաձայնությունները հաղթահարի ու ձեռք ձեռքի տված դիմակայի արտաքին վտանգներին:

ՀՅԴ-ն պետականության կողմնակից կուսակցություն է, նպատակը՝ միացյալ, հզոր հայրենիք ունենալն է: Միասնականության գաղափարը պետք է տիրի ամենուր:

Հարցազրույցը՝ Տ. ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

Նոր Սահմանադրության ընդունումով մենք հեռանում ենք մեկ միասնական քաղաքական դաշտից

Իր մտահոգություններն է կիսում ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր, Պաշտպանության, անվտանգության եւ օրինապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը:

- Պարոն Հովհաննիսյան, ինչքանո՞վ էր հրատապ նոր Սահմանադրության ընդունումը: Դրա անհրաժեշտությունն ինչքանո՞վ էր արդարացված:

- Դեռեւս ապրիլյան պատերազմից շատ առաջ քաղաքական ուժերը դիմել էին ԼՂՀ նախագահին՝ երկրում սահմանադրական բարեփոխումներ անցկացնելու առաջարկով, ինչպես այն արվել է Հայաստանի Հանրապետությունում, որով ՀՀ-ն անցել է կառավարման խորհրդարանական համակարգի: Կառավարման այդ ձեւը հոգեհարազատ է ՀՅԴ-ին, քանի որ՝ սկսած Հայաստանի Առաջին Հանրապետությունից՝ կառավարման համակարգն այդպիսինն էր, կառավարման այդ ձեւն էր ընդունված: 3-րդ հանրապետության անկախության հռչակումից ի վեր ՀՅԴ-ն նորից առաջարկեց խորհրդարանական կառավարման մոդելը: Բնականաբար, այդ մոդելը 1995 թվականին չընդունվեց ՀՀՇ-ական կառավարման օրոք, անցավ նախագահական կառավարման համակարգը:

Երբ ընդունվեց ԼՂՀ առաջին Սահմանադրությունը, Դաշնակցությունը դարձյալ տարբեր քաղաքական հարթակներում առաջ էր քաշում խորհրդարանական կառավարման հարցը, բայց ընդունվեց կիսանախագահական կառավարման համակարգը: Եվ 2015 թվականի վերջին ՀՀ-ում ընդունվեց ՀՅԴ-ի կողմից հավանության արժանացած սահմանադրական բարեփոխումների մասին օրինագիծը: Կարծում էինք, որ նույնը կկատարվի նաեւ ԼՂՀ-ում, քանի որ՝ ի վերջո բոլորիս երազանքը Մայր Հայաստանին միանալն է, եւ ցանկալի է, որ 2 հայկական հանրապետություններում գործի նույն քաղաքական համակարգը: Բայց, ցավոք սրտի, 2016 թվականի օգոստոսին առաջարկվեց մի հայեցակարգ, որը համահունչ չէ ՀՅԴ ծրագրին ու դիրքորոշումներին:

- Պարոն Հովհաննիսյան, վերջերս շրջանառության մեջ է դրվել այն արտահայտությունը, որ ԼՂՀ նոր Սահմանադրությունը Հրայր Թովմասյանի կողմից, այսպես ասած, «դեսանտ իջեցված» Սահմանադրություն է: Ի՞նչ կասեիք այդ մասին:

- Ես ձեռնպահ եմ մնում Սահմանադրությունն ինչ-որ անձերի հետ կապելու մտայնությունից, համենայնդեպս՝ ով էլ որ լինի այս Սահմանադրության նախագծի հեղինակը, այն չի արտացոլում հետեւյալ 3 հայեցակարգերը՝ սահմանադրական կարգ, ժողովրդավարական սկզբունքներ եւ ազգային նպատակներ, որին պետք է պատասխան տա առաջադրվող Սահմանադրությունը: Որպես այս երկրի քաղաքացի՝ ասեմ, որ ցանկալի է տեսնել ընկալելի համակարգ. եթե նախագահական է, ընկալելի նախագահական լինի, եթե խորհրդարանական է, ընկալելի՝ խորհրդարանական: Եվս մի հանգամանք՝ ցանկացած Սահմանադրություն՝ եթե փոխվում է, նախկինից լավը պետք է լինի: Ցավոք սրտի, այս հարցում եւս առաջընթաց չկա: Ես սահմանադրագետ չեմ, բայց գտնում եմ, որ այն սինթեզել պետք չէ:

- 2017 թվականի հունվարի 19-ին գումարվեց ԼՂՀ ԱԺ արտահերթ նիստ, որում Դաշնակցությունը դեմ քվեարկեց նոր Սահմանադրության նախագծին: Որպես ԼՂՀ քաղաքացի, ոչ որպես «Դաշնակցություն» խմբակցության անդամ, մասնավորապես ո՞ր հոդվածներին դեմ կքվեարկեիք:

- 89-103-րդ հոդվածներին: Դա թե՛ համաժամանակյա ընտրություններն են, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապված մեր մտահոգությունները: Կառավարության կառուցվածքի վերաբերյալ մեր առաջարկությունները եւ, ընդհանրապես, առանցքային կետերի վերաբերյալ մեր առաջարկներն ընդունվելու դեպքում կունենայինք շատ ավելի ընկալելի Սահմանադրություն, որով կշարժվեր մեր երկիրը, եւ հեռու չէինք լինի այն քաղաքական համակարգից, որ ձեւավորվել եւ ձեւավորվում է Հայաստանի Հանրապետությունում: Մեզ համար պարզ չէ նաեւ հակակշռման մեխանիզմները:

- Պարոն Հովհաննիսյան, վերջերս հայտնի դարձավ նաեւ, որ դեմ քվեարկողներից ,Վերածնունդ խմբակցության պատգամավոր Հայկ Խանումյանը Սահմանադրությանը դեմ քվեարկողների շտաբ է ստեղծել: Ինչպե՞ս եք դրան վերաբերում:

- Դա ցանկացած կուսակցության ձեւաչափն է: Մենք էլ ենք շրջաններում հանդիպումներ ունեցել մեր կուսակցական ընկերների եւ համակիրների հետ, բացատրել նախագծին դեմ քվեարկելու մեր հիմնավորումները: Այսինքն՝ ցանկացած քաղաքական ուժ ինքն է ընտրում, թե ինչպես պետք է մասնակցություն ունենա հանրաքվեին՝ իր ձեւաչափով:

- 2017 թվականի ապրիլին ՀՀ-ում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ, եւ Հայաստանն այդպիսով անցում կկատարի խորհրդարանական կառավարման մոդելին, իսկ ԼՂՀ նոր Սահմանադրության նախագծի ընդունումից հետո ԼՂՀ-ում կլինի կենտրոնաձիգ նախագահական կառավարում: Արդյո՞ք հակասություններ չեն առաջանա հայկական 2 հանրապետությունների իրավաքաղաքական դաշտում:

- Մեր մտահոգություններից մեկն էլ այն է, որ դրանով մենք հեռանում ենք մեկ միասնական քաղաքական դաշտից, որը պետք է ձեւավորվեր հայկական 2 հանրապետությունների միջեւ մինչեւ վերամիավորումը:

Հարցազրույցը՝ Լ. ԲԱՂՐՅԱՆԻ

Տոնակատարություն՝ նվիրված ՀՅԴ 126-ամյակին

2017 թվականի հունվարի 15-ին Գլենդելի «Հայ Սքուլի» հանդիսասրահը դարձավ Դաշնակցության 126-ամյակի ու Արցախի անկախության օրվան նվիրված տոնակատարության անցկացման հանդիսավոր վայրը:

Օրվա գլխավոր բանախոսն էր Արցախի ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Արմեն Սարգսյանը: Արցախյան ազատամարտի մասնակից Շահիկ Աղաբաբյանի կնքահայրությամբ՝ 126 պատանիներ հանդիսավորությամբ իրենց խոստումը տվին ծառայելու ազգին: Կնքահայրը Արցախից հատուկ բերած «Հայրենյաց պաշտպանի» հատուկ կրծքանշաններ նվիրեց պատանիներին, որ անձամբ հանձնվեց Արմեն Սարգսյանի ձեռքով:

Հունվարի19-ին Արցախի ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Արմեն Սարգսյանը ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Տարոն Տեր- Խաչատրյանի ներկայությամբ այցելեց նաեւ Լոս Անջելեսի քաղաքապետարան, ուր ջերմ ընդունելության արժանացավ քաղաքապետարանի խորհրդի անդամ Փոլ Գրիգորյանի կողմից:



Արցախի Շուշի քաղաքի հետ քույր քաղաք հանդիսացող քաղաքի միակ հայազգի ղեկավարը Սարգսյանի եւ Տեր-Խաչատրյանի հետ զրույցի ընթացքում ներկայացրեց իր անձնական զգացումներն ու հույզերը 2 անգամ (2013 եւ 2016 թթ.) Արցախ կատարած այցելությունների մասին, մանավանդ, երբ այն տեղի էր ունեցել ապրիլյան քառօրյա պատերազմից անմիջապես հետո:

Արցախի անկախությունը, որ, Գրիգորյանի վկայությամբ, ճանաչել էր Լոս Անջելեսի վերին ղեկավարությունը, խթան հանդիսացավ Կալիֆոռնիա նահանգի կողմից Արցախի Հանրապետության ճանաչման աշխատանքներին:

Փոլ Գրիգորյանը նոր առաջարկություններ փոխանցեց Արցախի հետ համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ: Շահեկան զրույցից հետո նա հյուրերին ծանոթացրեց քաղաքապետարանի տարբեր բաժինների հետ:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի անդամը ընտրվել է ավստրալական նահանգի վարչապետ

ԱՄՆ Հայ Դատը տեղեկացնում է, որ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ է ընտրվել ՀՅԴ Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի անդամ Գլեդիս Բերեջիկլյանը՝ փոխարինելով Մայք Բերդին:

Հայ Դատի պաշտոնական կայքի հաղորդմամբ՝ 46-ամյա Բերեջիկլյանը ներկայացնում է նահանգի «Ազատական» կուսակցությունը:

Նա դեռ երիտասարդ հասակում ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ավստրալիայի հայկական համայնքի կյանքին, եղել է Հայ մարմնակրթական միության՝ ՀՄԸՄ-ի անդամ եւ զբաղվել բասկետբոլով:

Բերեջիկլյանը խորհրդարանում բարձրացրել է Ավստրալիայի հայ համայնքի խնդիրները՝ անդրադառնալով Ավստրալիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի կարեւորությանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը նրան պարգեւատրել է նաեւ «Երախտագիտություն» մեդալով: Բերեջիկլյանն արժանացել է Ավստրալիայի հայ համայնքի «Տարվա ընկեր» մրցանակին:

Բակո Սահակյանը հունվարի 24-ին շնորհավորական ուղերձ է հղել Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ տիկին Գլեդիս Բերեջիկլյանին:

Ուղերձում ասված է.

«Հարգարժան տիկին Բերեջիկլյան,

Արցախի ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ:

Վստահ եմ, որ Ձեր գիտելիքներն ու հարուստ փորձը լավագույնս կծառայեն՝ ի բարօրություն նահանգի բնակչության:

Նոր Հարավային Ուելսը, առաջատար դերակատարություն ունենալով Ավստրալիայի տնտեսական ու քաղաքական կյանքում, հայտնի է նաեւ որպես մի երկրամաս, որտեղ մշտապես կարեւորել են ժողովուրդների ազատությունն ու իրավահավասարությունը, մարդու իրավունքներն ու համընդհանուր ժողովրդավարական արժեքները:

Այդ իրողության վառ արտահայտությունն է նաեւ 2012 թվականի հոկտեմբերի 25-ին նահանգի օրենսդիր մարմնի կողմից ԼՂՀ անկախության եւ նրա բնակչության ինքնորոշման իրավունքի ճանաչման վերաբերյալ բանաձեւի ընդունումը:

Լիահույս եմ, որ Ձեր պաշտոնավարման ընթացքում նոր շունչ ու բովանդակություն կհաղորդվի Արցախի եւ Նոր Հարավային Ուելսի միջեւ բարեկամական կապերին՝ նպաստելով փոխշահավետ համագործակցության հաստատմանը:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ Ձեզ եւ մաղթում քաջառողջություն ու մեծագույն հաջողություններ Ձեր առաքելության իրականացման ճանապարհին»:

Քարին Տակի հերոսամարտին նվիրված միջոցառում

Հունվարի 26-ին Քարին տակի հերոսամարտի 25-ամյակն էր: 1992 թվականի այս օրն Արցախյան ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ նշանավորվեց մի նոր հաղթանակով եւ հանդիսացավ մեր հիմնարար հաղթանակներից մեկը:

Հունվարյան այս օրը, վաղ առավոտյան ազերիները բերդաքաղաքից լայնամասշտաբ հարձակման անցան: 12 ժամ անց հարեւան գյուղերի ջոկատների օգնությամբ հակառակորդը ետ էր շպրտվել՝ մարտի դաշտում թողնելով 150 զոհ: Գյուղն էլ կորուստներ ունեցավ: Անմահացավ 22 մարդ:

Գյուղի տեղանքին ծանոթ մարդկանց բանականությունը թելադրում էր, որ գյուղի անկումն անխուսափելի պետք է լիներ, հատկապես, որ ամբողջովին թուրքաբնակ Շուշին դարձրել էին կրակակետ: Քարին տակի աննախադեպ ինքնապաշտպանությունն ու հունվարի 26-ի հերոսամարտը եկան հաստատելու, որ Շուշին հնարավոր է ազատագրել:

Օրվա առիթով ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը նախաձեռնել էր «Ննջեցեք խաղաղությամբ, ձեր գործը շարունակում ենք» խորագիրը կրող միջոցառում:

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում զոհված ազատամարտիկների հիշատակին կազմակերպված մոմավառությանը մասնակցելուց հետո՝ շրջաններից եւ մայրաքաղաքից ժամանած շուրջ 100 երիտասարդներ քայլերթով ուղղվել են Քարին տակ գյուղ:

«Այս եւ նման միջոցառումներն իրականացվում են երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացման նպատակով»,- նշել է ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Գայանե Գրիգորյանը:

Ելույթով հանդես եկավ Քարին տակ համայնքի ղեկավար Մխիթար Առուշանյանը, ով նահատակված դաշնակցական, Քարին տակի ջոկատի հրամանատար Վաղինակ Առուշանյանի որդին է:

«Եթե քառորդ դար առաջ չլիներ մեր միաբանությունը, հազիվ թե կարողանայինք պաշտպանել մեր գյուղը, իսկ ընդգրկուն առումով՝ ամբողջ Արցախը: Միասնության ոգին պետք է առաջնորդի մեզ»,- ասաց Մ.Առուշանյանը

ԼՂՀ ՊԲ նախարարի հրամանով ազգային ազատագրական պայքարում եւ բանակաշինության գործում ունեցած ավանդի համար մի շարք ազատամարտիկներ պարգեւատրվեցին պատվոգրերով:

Ազգային, հեղափոխական երգերով հանդես եկավ ԼՂՀ ՊԲ «Ասպետ» համույթը, իսկ ազգային պարերով՝ Նորագյուղի, Տողի եւ Ազոխի պարախմբերը:

«ԱՊԱՌԱԺ»

Հրադադարի խաբկա՞նք, թե՞ պատրանք

Հարցն ամենեւին էլ հռետորական չէ: Այն միանգամայն իրատեսական է եւ բավական շոշափելի հիմքեր ունի: Խոսքս վերաբերում է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի պահպանման պլանային դիտարկումներին, որոնք ահա տասնամյակներ ի վեր պարբերաբար անցկացնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բարձր մանդատով օժտված Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը՝ նրա գործող նախագահի անձնական ներկայացուցչի ու վերջինիս դաշտային օգնականների միջոցով:

Ի՞նչ աստիճան արդյունավետ են եւ, արդյոք, առհասարակ արդյունավե՞տ են դրանք: Բանն այն է, որ այդ դիտարկումների ընթացքում գրեթե երբեք չի արձանագրվել հակամարտ զորքերի շփման գծում հրադադարի խախտման որեւէ էական դեպք: Ասացի գրեթե, որովհետեւ, իրոք, եղել են առանձին միջադեպեր, երբ դիտարկման ժամանակ մեկ-երկու կրակոց է հնչել՝ պատճառ դառնալով, որպեսզի առաքելության մասնակիցներն անհապաղ դադարեցնեն դիտարկումն ու լքեն տվյալ տարածքը՝ ելնելով իրենց կյանքին սպառնացող հնարավոր վտանգից խուսափելու անհրաժեշտությունից: Ինչ խոսք, հասկանալի եւ ընդունելի է այդ անհրաժեշտությունը: Բայց ուզում եմ կատարել մեկ վերապահություն: Անգամ նման սակավ արտակարգ իրավիճակներում, էլ չեմ ասում՝ Ադրբեջանի սանձազերծած ապրիլյան լայնածավալ ագրեսիայի օրերին, միջազգային առաքելությունը քար լռություն պահպանելով չի արձանագրում, թե հատկապես որ կողմից են առաջինը հնչել այդ կրակոցները: Թեկուզ, թե իրենց եւ թե առանձնապես մեզ՝ հայկական կողմերի համար պարզից էլ պարզ է, որ նախահարձակ էր միայն մեկ կողմը՝ ադրբեջանականը: Իհարկե, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչն իր անմիջական ղեկավարին ընդունված կարգով հանգամանալի զեկուցում է տեղի ունեցածի մասին՝ նշելով նաեւ նախահարձակ կամ սադրիչ կողմին: Բայց ահա հրապարակավ՝ ոչինչ: Ոչ բուն դիտարկողների եւ ոչ էլ նրանց հակամարտության գոտի ուղարկած եւ ողջ տեղեկատվությանը լիովին տիրապետող ԵԱՀԿ գործող նախագահի, ինչպես նաեւ այդ միջազգային կազմակերպության Մինսկի խմբի համանախագահ դեսպանների կողմից:

Զորօրինակ, վերջին պլանային դիտարկումը, որը փաստորեն առաջինն էր նոր տարում՝ 2017 թվականին, անցկացվել է հունվարի 24-ին, արցախյան կողմի հաղորդմամբ՝ Մարտակերտի շրջանի Սեյսուլան գյուղի հյուսիս-արեւմուտքում, ադրբեջանական տեղեկատվությամբ՝ Թարթառի շրջանի Ղափանլի գյուղի մերձակայքում: Ընդ որում՝ երկուստեք, հիմք ընդունելով առաքելության տեղեկատվությունը, հաղորդում են, որ շփման գծի դիտարկված հատվածում խաղաղ էր: Հայկական կողմն իրավիճակը ձեւակերպել է այսպես՝ «կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել», իսկ ըստ ադրբեջանական լրատվության՝ «դիտարկումն անցել է առանց միջադեպերի»: Երեւի թե տարբերությունն այնքան էլ էական չէ: Բայց իրականում բանն այդ չէ: Բանն այն է, որ հատկապես դիտարկումների միջանկյալ ժամանակահատվածներում ադրբեջանական կողմը մեկ օր անգամ չի դադարեցնում 1994թ. մայիսից ի վեր հաստատված հրադադարի խախտումները՝ կիրառելով զանազան հրազեն՝ դիպուկահար հրացաններից մինչեւ նռնականետեր եւ տարբեր տրամաչափի ականանետեր՝ նոր զոհերի տեղիք տալով հրադադարի պայմանավորվածությանը հավատարիմ հայկական կողմին:

Այսպես, վերջին հերթական դիտարկումից ընդամենը երկու օր առաջ՝ հունվարի 22-ին, ադրբեջանական կողմից արձակված դիպուկահար կրակոցի հետեւանքով Արցախի Պաշտպանության բանակի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում արցախցի զինվոր է զոհվել՝ պայմանագրային զինծառայող Կարեն Ուլուբաբյանը: Այդ ցավալի դեպքից չորս օր առաջ էլ՝ հունվարի 18-ին Պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից զոհվել է զինծառայող Անդրանիկ Մուսիկյանը: Իսկ դրանից երեք օր առաջ՝ հունվարի 15-ին զինվորական հոսպիտալում մահացել է ժամկետային զինծառայող Գարիկ Վարդանյանը, ով հակառակորդի կրակոցից ծանր վիրավորվել էր դեկտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը: Եվս փոքր ինչ անդրադարձ կատարելով անցած ժամանակին՝ արձանագրենք Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղից դեպի հարավ-արեւելք ընկած պետական սահմանի հատվածում ադրբեջանական զինուժի ձեռնարկած դիվերսիոն ներթափանցման փորձը դեկտեմբերի 29-ին, որի հետեւանքով դարձյալ զոհվեցին երեք հայորդիներ՝ ավագ լեյտենանտ Շավարշ Մելիքյանը, շարքայիններ Էդգար Նարայանը եւ Էրիկ Աբովյանը:

Անդառնալի կորուստների կապակցությամբ վշտակցելով հայրենիքի պաշտպանության դիրքերում նահատակված հայ քաջորդիների ընտանիքներին, այնուամենայնիվ, մեր հարցական հայացքը վերստին ուղղենք ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը համակարգող ԵԱՀԿ-ին՝ այդ կազմակերպության գործող նախագահից մինչեւ Մինսկի խմբի համանախագահություն, ու կրկնենք մեր հարցը՝ արդյո՞ք ինքնախաբեություն եւ կամ, պարզապես, հրադադարի պահպանման պատրանքի տեսքով խաղաղության խաբկա՞նք չեն պարբերաբար իրականացվող դիտարկումները հակամարտ զորքերի շփման գծում: Այլապես, ինչպե՞ս կարելի է հասկանալ ու գնահատել հրադադարի բազմաթիվ, ամենօրյա եւ գրեթե ամենժամյա խախտումներն ադրբեջանական զորքերի կողմից: Այլապես, ինչպե՞ս բացատրել հրադադարի խախտումների, իրավիճակը սրվելու վերաբերյալ նույն այդ հաշտարար միջազգային կազմակերպության ապրիորի, ոչ հասցեական հայտարարությունները: Այլապես, ինչո՞ւ չի գործում հրադադարն անխախտ պահպանելու միջազգային պարտադրանքը: Ինչո՞ւ Մինսկի խմբի համանախագահ գերտերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների նախագահներն այդքան անզոր են Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանավորվածություններից համառորեն հրաժարվող Ադրբեջանի կամակորության առջեւ: Չէ՞ որ այդ պայմանավորվածություններն էական նախադրյալ կարող են ծառայել եթե ոչ հակամարտության վերջնական կարգավորման, ապա տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու համար: Չէ՞ որ շփման գծում դիտարկման ժամանակակից սարքերի տեղադրման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի ընդլայնման եւ արձանագրված միջադեպերի հետաքննության իրականացման վերաբերյալ առաջարկվող այդ միջոցները, իրենց իսկ խոստովանությամբ, ի զորու են կանխելու անիմաստ, անտեղի մարդկային կորուստները: Ասել, թե Մինսկի խմբի համանախագահները եւ կամ ԵԱՀԿ փոխնիփոխ գործող նախագահները չեն ցավում այդ կորուստների համար, երեւի թե այնքան էլ ճիշտ չենք լինի: Իհարկե, կորուսյալների հարազատների պես նրանք աղի արցունք չեն թափում ծանր վշտից: Բայց ասում են, թե ցավում են: Ասում են եւ այդքանով էլ բավարարվում, չմտածելով այդ ողբերգությունների դեմն առնելու գործուն միջոցների, այդ միջոցները հակամարտ կողմերի համար պարտադիր, անվերապահ վարքագիծ դարձնելու մասին:

Ասենք, արդյո՞ք նույն իրավիճակը չէր Բալկաններում՝ հարավսլավական ճգնաժամի, Մոլդովայում՝ մերձդնեստրյան, Վրաստանում՝ աբխազական եւ հարավօսական, Ուկրաինայում՝ դոմբասյան հիմնախնդիրների կարգավորման անցյալ կամ ներկա գործընթացներում, որոնցում հաշտարար դատավորի դեր է ստանձնել նույն միջազգային ատյանը՝ անփոփոխ կերպով ամենուրեք ի հայտ բերելով, ցուցադրելով անսկզբունքայնության եւ անզորության իր ավանդական կեցվածքը:

Բայց վերստին դառնանք մեր խնդրին: Մինչ Մինսկի խմբի համանախագահները ստեպ-ստեպ երթեւեկում են մեր տարածաշրջանի մայրաքաղաքներում՝ ամենաբարձր մակարդակի հանդիպումներում փորձելով հող նախապատրաստել հակամարտ կողմերի առաջին դեմքերի նոր հանդիպումների համար, ու մինչ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմը հրադադարի խախտումների ապահով միջակայքում պարբերաբար դիտարկումներ է անցկացնում զորքերի շփման գծի տարբեր հատվածներում, Ադրբեջանի նախագահը շարունակում է, այսպես ասած, իր էշը քշել՝ աջ ու ահյակ սպառնալիքներ տեղալով Արցախի, Հայաստանի եւ, ընդհանրապես, համայն հայության դեմ՝ խոստանալով առաջին իսկ հարմար պահին, իր իսկ արտահայտությամբ, «հայերից ազատագրել Ադրբեջանի հինավուրց պատմական տարածքները՝ Ղարաբաղից մինչեւ Նախիջեւան»: Թե այդ խոստումներին ի՞նչ աստիճան հավատ են ընծայում նրա ունկնդիրները Բաքվում եւ այդ հանրապետության այլ վայրերում, թողնենք հլուհնազանդ հպատակների նրանց սահմանափակ, ճահճացած գիտակցությանն ու խղճին: Բայց թե ի՞նչ արձագանք են գտնում այդ ճամարտակությունները դրսերում՝ միջազգային ատյաններում, առանձնապես՝ ԵԱՀԿ-ում, կարծում եմ, դժվար չէ պատկերացնել՝ հիմք ունենալով նախորդ բոլոր համարժեք իրավիճակները: Համբերատար սպասելով նաեւ հայկական կողմերի՝ պաշտոնական Երեւանի ու Ստեփանակերտի անհամեմատ զուսպ, բայց եւ Բաքվի ախորժակը զսպող հակադարձումներին, միջազգային այդ ատյանում անմիջապես աշխուժանում ու գյուտ արածի պես՝ էվրիկա գոչելով, մեջտեղ են բերում հավասարության մաթեմատիկական նշանը՝ իրար հաջորդող բարեկամական կշտամբանքների շարանով՝ կողմերին կոչ անելով խուսափել ռազմատենչ հայտարարություններից:

Ահա այդպիսին է կամ հակամարտության կարգավորման եւ այդ համատեքստում՝ հրադադարի դիտարկման ողջ գործընթացը, որը, ցավոք, տարվելով համահարթեցման՝ երբեւէ իրեն չարդարացրած սկզբունքով, առավելապես հեռացնում, քան մոտեցնում է կայուն ու վերջնական խաղաղության հաստատման բաղձալի ժամկետը:

Միքայել ՀԱՋՅԱՆ

Ադրբեջանն ունեցել է հարձակման Ռուսաստանի լռակյաց համաձայնությունը. Հրանտ Մելիք-Շահնազարյան

Ապրիլյան ակտիվ մարտական գործողություններից հետո ստեղծված վիճակի, հնարավոր զարգացումների մասին «Ապառաժ»-ը զրուցել է քաղաքագետ Հրանտ Մելիք-Շահնազարյանի հետ:

- Պարոն Մելիք-Շահնազարյան, որո՞նք են Ձեր կարծիքով ապրիլյան ակտիվ ռազմական գործողությունների դասերը եւ պատրաստ ենք արդյո՞ք հետագայում դիմագրավելու նմանատիպ ագրեսիայի:

- Կարելի է խոսել երկու կոմպոնենտի մասին՝ զուտ ռազմական եւ դիվանագիտական: Անկեղծ ասած՝ երկու ոլորտներում էլ ես ինչ-որ չափով գոհունակությամբ կարող եմ նշել, որ որոշակի դրական փոփոխություններ արվել են: Իհարկե, բանակի հետ կապված սա ավելի ակնհայտ է երեւում. ընդամենը մի քանի ամիսների ընթացքում ամբողջ առաջնագիծն ըստ էության վերազինվեց նոր տեխնիկայով, դիտարկման նոր սարքերով, ինժեներական նոր կառույցներով: Այսինքն, մեծ ջանքեր գործադրվեցին առաջնագիծն ավելի ամուր դարձնելու եւ թշնամուն ավելի տեսանելի դարձնելու ուղղությամբ, ինչու չէ՝ նաեւ նոր զինատեսակներ ձեռք բերվեցին: Դա մենք տեսանք ՀՀ Անկախության օրվան նվիրված զորահանդեսի ժամանակ: Այդ զինատեսակները Հայաստանը դարձնում են ոչ միայն տեղային, այլեւ տարածաշրջանային ուժի կենտրոն: Այսինքն, ռազմական ոլորտում փոփոխություններն ակնհայտ են, դրանք հստակ երեւում են, եւ շարունակական են, ինչը կարեւոր է, որովհետեւ մարտահրավերների բնույթն անընդհատ փոխվում է, եւ պետք է հասցնել դրանց համապատասխան պատրաստության միջոցներ ձեռնարկել:

Քաղաքական ոլորտում դրական տեղաշարժեր տեսնում եմ, բայց ոչ այնքան, ինչքան կարելի էր սպասել: Առաջին հերթին՝ հայկական կողմը խստացրեց իր բանակցային դիրքորոշումը Ադրբեջանի հանդեպ: Պաշտոնական Երեւանը նախապայմաններ է առաջ քաշել բանակցությունները շարունակելու համար, եւ՝ մինչեւ Ադրբեջանը չբավարարի այդ նախապայմանները, բանակցային գործընթաց չի սկսվի:

Բացի դրանից, մեծ հաշվով Մադրիդյան սկզբունքները մի կողմ են դրվել: Իհարկե, հիմա Ադրբեջանը, միջնորդները փորձում են ամեն ինչ անել, որպեսզի վերակենդանացնեն փաստաթուղթը, բայց գործնականում մենք տեսնում ենք, որ դրանց շուրջ քննարկումներ չեն ընթանում, իսկ համանախագահների հանդիպումների ժամանակ քննարկվում են այնքան չնչին նշանակության հարցեր, որոնք հստակ կարող են վստահություն ներշնչել, որ այս պահին Մադրիդյան սկզբունքներին վերադարձի մասին խոսք լինել չի կարող:

Քաղաքական որոշակի ճնշումներ են գործադրվել Ադրբեջանի վրա նաեւ Հայաստանի կողմից, ինչը լավ եւ դրական դինամիկա է: Վստահ եմ, որ 2017թ. հայկական դիվանագիտությունը կփորձի այս գիծն ավելի հստակ դարձնել, ուժեղացնել, ինչը, ցավոք, չի կարելի ասել միջնորդների հետ հարաբերություններում: Այստեղ բավական լուրջ բացթողումներ ունենք: Չենք ստիպել միջնորդներին՝ որպես քաղաքական գործոն ընկալել Ադրբեջանի հարձակումը: Դրանից բխող նոր մոտեցումներ չեն ձեւավորվել Ադրբեջանի հանդեպ: Սա, իմ կարծիքով, ամենամեծ բացթողումն է, որին պետք է ուշադրություն դարձնել եւ այդ ուղղությամբ աշխատել: Միջնորդներն իրավունք չունեն այլեւս իրենց նախկին մոտեցումներով կամ գնահատականներով հանդես գալու, որովհետեւ իրավիճակ է փոխվել սահմանին, եւ հստակ երեւում է, թե ով է այդ իրավիճակը փոխողը, ով է բանակցային գործընթացին հատկացված ժամանակն օգտագործել նոր պատերազմին նախապատրաստվելու համար:

- Հստակ է, որ միջնորդ պետությունները, այդ թվում՝ Ռուսաստանը, ցանկանում են տեսնել խաղաղ տարածաշրջան: Արդյո՞ք դա չի հակասում Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զինելու քաղաքականությանը:

- Այո, հակասում է: Ռուսաստանը Ադրբեջանին զենք վաճառելը փորձում է ներկայացնել որպես բիզնես նախագիծ, բայց իրականում քաղաքական առումով լուրջ հարված են հասցնում հենց իրենց: Ռուսաստանում կան բավական ազդեցիկ ուժային կենտրոններ, որոնք դա գիտակցում են, փորձում են ազդել ռազմաարդյունաբերության կամ զենքի

առեւտրի մարտավարության վրա: Ընդորում, դա ազդում է ոչ միայն Հարավային Կովկասը խաղաղ տեսնելու իրենց նպատակին, այլ նաեւ լուրջ սպառնալիք է բուն Ռուսաստանին, որովհետեւ եթե պայթում է Հարավային Կովկասը, շղթայական ռեակցիայով պայթում են նաեւ Հյուսիսային Կովկասը, որտեղ Չեչնիայի, Դաղստանի, Ինգուշեթիայի խնդիր կա:

Մեծ հաշվով՝ զենք վաճառելով եւ այժմեական ֆինանսական օգուտ ստանալով՝ Ռուսաստանը վտանգի է դնում իր հեռուն գնացող նպատակները եւ անգամ վտանգի սպառնալիք է առաջացնում իր իսկ տարածքային ամբողջականության համար: Բայց միշտ չէ, որ առաջնորդվում են ազգային անվտանգության շահերով: Հաճախ զուտ ֆինանսական եկամուտները մթագնում են ոմանց ուղեղը եւ ստիպում ֆինանսական եկամուտների ետեւից ընկել, ոչ թե՝ քաղաքական կամ անվտանգության: Ռուսաստանը ապրիլին դա հասկացավ: Հենց դրանով եմ պայմանավորում այն հանգամանքը, որ Հայաստանին տրվեցին զինատեսակներ, որոնք հայկական զինված ուժերի համար հասանելի են դարձնում Ադրբեջանի ցանկացած թիրախ:

Ապրիլի հետ կապված՝ ես ավելի քան համոզված եմ, որ Ադրբեջանն ունեցել է հարձակման Ռուսաստանի լռակյաց համաձայնությունը, որովհետեւ փոխարենն էլ Ռուսաստանն ակնկալում էր տեսնել Ադրբեջանին ԵՏՄ կազմում, այսինքն՝ մի քանի գործոններով է Ռուսաստանը բացասաբար ազդել իր իսկ համար կարեւոր նշանակություն ունեցող անվտանգության համակարգի վրա: Բայց տպավորություն կա, որ Ռուսաստանում որոշակի եզրահանգումներ են արել եւ այնտեղ էլ են փորձում շտկել նախկինում թույլ տված իրենց սխալները: Այսօր վստահ կարելի է ասել, որ հենց Ռուսաստանից ձեռք բերած զենքի շնորհիվ է, որ հայկական զինված ուժերը շարունակում են մարտական գերակայություն ունենալ Ադրբեջանի նկատմամբ:

- Ինչպե՞ս կգնահատեիք Ադրբեջանի ռազմական պատրաստվածությունը: Արդյո՞ք հավանական եք համարում ակտիվ ռազմական գործողությունների վերսկսումը:

- Ադրբեջանից բխում է սպառնալիք, եւ Ադրբեջանն այսօր խնդիր ունի շտկելու բոլոր այն սխալները, որոնք գործել է ապրիլին: Ապրիլին փորձում էր ռազմական ճանապարհով իրավիճակ փոխել, որոշակի հաջողություններ ունենալ եւ դա հետագայում կապիտալիզացնել քաղաքական դաշտում, փորձել դա դարձնել քաղաքական գործոն: Նրանց այդ փորձը տապալվեց: Դրա հետ միաժամանակ, տապալվեց նաեւ մի շարք քաղաքական գործիքներ բանակցությունների սեղանին՝ որպես իրենց կողմից հաղթաթուղթ օգտագործելու հնարավորությունը, մասնավորապես՝ այլեւս չեն կարող խոսել այն մասին, որ փոխզիջումային տրամաբանության մեջ ընթացող բանակցային գործընթացում իրենց կողմից զիջում կարող է լինել պատերազմի չվերսկսումը, որովհետեւ մինչ այդ սպառնում էին, որ պատերազմ կվերսկսեն եւ ռազմական ուղով կլուծեն խնդիրը: Հիմա ակնհայտ է, որ դա այլեւս չեն կարողանա օգտագործել, եւ առավել քան ակնհայտ է, որ իրենց կողմից չի կարող զիջում համարվել պատերազմ չվերսկսելը: Քանդվեց նաեւ իրենց այն միֆը, թե ռազմի դաշտում պարտվել էին, բայց հետագայում հաղթել են, որովհետեւ ավելի հզոր տնտեսություն ունեն եւ իրենց ռազմական բյուջեն հավասար է Հայաստանի ողջ բյուջեին եւ այլն:

Ադրբեջանը կցանկանար սկսել պատերազմական գործողությունները, շտկել ապրիլյան սխալները, բայց պրոբլեմ ունեն: Ապրիլին, նախ, հայտնի դարձավ, որ բավականաչափ ռազմական պոտենցիալ չունեն հարցն այդ ուղիով լուծելու համար, եւ երկրորդն այն է, որ ապրիլյան օրերին կորցրին իրենց հարվածային ուժի զգալի մասը՝ մոտ 1000 զինծառայող, որոնք հիմնականում հատուկ ջոկատայիններ էին: Դա շուտ վերականգնվող կորուստ չէ իրենց համար: Ժամանակ է պետք, որպեսզի կարողանան նմանատիպ հարվածային ուժեր ձեւավորել: Այդ իսկ պատճառով՝ կասեի, որ ցանկություն ունեն, բայց հնարավորություն չունեն: Այս իրավիճակում ավելի տրամաբանական է Ադրբեջանի կողմից սպասել կարճատեւ, փոքրիկ, լոկալ խնդիրների լուծման փորձերի: Դա դիվերսիոն գործողությունների միջոցով կլինի, եւ թե մեծ ուժերի կուտակումով խնդիր լուծելու մարտավարություն, որն, իհարկե, մեծ սպառնալիք է թե հայկական պետությունների, թե ընդհանրապես տարածաշրջանային անվտանգության համակարգին: Կարծում եմ, որ 2017-ին պետք է պատրաստ լինենք կանխելու հակառակորդի հենց նման գործողությունները:

- Այսինքն, բացառո՞ւմ եք լայնածավալ մարտական գործողությունների վերսկսումը:

Վստահ եմ, որ լայնածավալ ռազմական գործողությունները հավանական չեն, չնայած լոկալ պատերազմները միշտ ավելի մեծանալու հավանականություն ունեն: Շանսերը շատ են, բայց Ադրբեջանը պատրաստ չէ լայնածավալ պատերազմի վերսկսվելուն ոչ ռազմականապես, ոչ տնտեսապես, ոչ քաղաքականապես, որովհետեւ ապրիլից հետո՝ բացի նրանից, որ թուլացել են նրանց դիրքերը բանակցությունների սեղանին, թուլացել են դիրքերը նաեւ միջազգային քաղաքական ընկալումներում: Այսինքն, նրանք նորից իրենց դրսեւորեցին որպես ագրեսոր կողմ, իսկ մեր տարածաշրջանում հիմնական աշխարհաքաղաքական խաղացողները, լինի դա Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպա եւ այլն, բոլորը հետաքրքրված են տեսնելու կանխատեսելի եւ խաղաղ Հարավային Կովկաս, ոչ թե վտանգերով լի:

Այստեղ տարբեր կոմունիկացիոն, էներգետիկ եւ այլ ծրագրեր են իրականացվում, որոնց համար խաղաղություն է պետք: Ադրբեջանն արդեն մեկ անգամ ցույց տվեց, որ ինքը հստակ սպառնալիք է այդ խաղաղությանը, եւ դրա արդյունքում բավական լուրջ ճնշումների ենթարկվեց: Նրանք անգամ խոստովանում էին դրա մասին: Ալիեւը խոսում էր այն մասին, որ փակ սենյակներում իրեն ճնշում են, որպեսզի ճանաչի Արցախի անկախությունը: Ալիեւը հասկանում է, որ մեկ անգամ դա հնարավոր եղավ անել եւ միջազգային հանրությունից պատիժ չստանալ, երկրորդ անգամ դա չի ստացվի:

Հարցազրույցը՝
Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

Ապրիլյան պատերազմը քաղաքական առեւտուր էր. Վլադիկ Դանիելյան

- Որտե՞ղ է գյուղապետարանը,- հարցնում եմ Մեծ Թաղերի գյուղամիջում հավաքված մարդկանց:

- Ես էլ կոնկրետ չգիտեմ,- հարցիս կես կատակ կես լուրջ պատասխանում է 1998-ից գյուղապետի պարտականությունները ստանձնած, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Վլադիկ Դանիելյանը, այնուհետեւ թաքցնում ձեռքերը տաբատի գրպաններում եւ բարձրանում գյուղի՝ թերեւս միակ անմխիթար վիճակում գտնվող շենքի՝ գյուղապետարանի ճռճռուն աստիճաններով:

Սենյակում 1975 թվականի շունչն է (վերջին անգամ այդ թվին է շենքը վերանորոգվել)՝ տեղ-տեղ գունաթափված ալ կարմիր հատակ, վերեւը՝ նույներանգ մաշած գորգ, հին սպասքապահարան՝ կոկիկ շարված թուղթ-գրքերով, եռագույն դրոշ, սենյակի անկյունում գանձապահարան՝ դատարկ՝ ինչպես կասեր գյուղապետը: Վլադիկը նստում է «Т»-աձեւ հին սեղանի գլխին, ես՝ հակառակ կողմում:

Երկու տասնյակ, ինը տարի համայնքի ղեկավար Վլադիկ Դանիելյանը

Վլադիկ Դանիելյանը Մեծ Թաղերում հայտնի Աղաբեկյան տոհմի կարկառուն ներկայացուցիչն է. եւ իր մայրն էր Աղաբեկյան, եւ հոր մայրը, իսկ Դանիելյան ազգանունը ժառանգել է հորից: Ասում է՝ 75%-ով Աղաբեկյան եմ, 25%-ով՝ Դանիելյան:

Ուսումը հարգող գերդաստանում մեծացած Վլադիկը Մեծ Թաղերի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետ: Ավարտելուն պես վերադարձել է գյուղ եւ աշխատանքի անցել Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում՝ միաժամանակ դասավանդելով աշխարհագրություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա եւ ֆիզկուլտուրա առարկաները:

Երիտասարդ տարիքից իր վրա է վերցրել ընտանիքի հոգսը, պատերազմի տարիներին՝ գյուղը պաշտպանելու, իսկ հրադադարի պայմանագիր ստորագրվելուց հետո՝ գյուղը զարգացնելու եւ շենացնելու պարտականությունը:

Արցախյան պատերազմի տարիներին նախ գործել է՝ որպես գումարտակի շտաբի պետի տեղակալ, ապա՝ որպես Հադրութի գնդի շտաբի պետի տեղակալ, իսկ 1995 թվականից՝ Հադրութի գնդի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով փոխհրամանատար:

1998թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած Մեծ Թաղերի տեղական ինքնակառավարման առաջին ընտրություններում ընտրվել է գյուղապետ եւ մինչ օրս վայելում է գյուղացիների մեծամասնության վստահության քվեն: «Տեռալում Ստալինը»՝ կատակում է Վլադիկ Դանիելյանը:

«Հնարավոր չէ 1515 բնակիչ ունեցող գյուղում բոլորի համար լավ գյուղապետ լինել: Սպառման հոգեբանությունն արմատավորվել է ժողովրդի մեջ: Բավական է մեկի հարյուր հոգսերից մեկը չկարողանաս լուծել, վերջ՝ դու լավ մարդ չես,- համեստորեն նշում է Վլադիկ Դանիելյանը: Նրա գյուղապետության ընթացքում արված աշխատանքները «հիշեցնելուց» հետո /գյուղը գազաֆիկացված է, «ջրարփիացված»՝ ինչպես նա է ասում, հատակը՝ սալապատված, գյուղում գործում է թանգարան ու էթնոկենտրոն, «Կաժ» էթնոկոմպլեքս, դարբնոց, իսկ բնակչության գրեթե 95%-ն ունի աշխատանք/ նա նշեց. «Գյուղի զարգացմանը, բարգավաճմանը միտված բոլոր գործողությունները ես ողջունում եմ եւ մեծ սիրով տեղս կզիջեմ, սակայն ի՞նչ պետք է անեն, որ մենք չենք արել: Համ էլ՝ մենք հո փափուկ բարձերի վրա չենք աշխատում: Այսօր խղճուկ բյուջեից բացի գյուղապետարանին ոչ մի բան չի հատկացվում»:

Դե մենք белый ворон (սպիտակ ագռավ) ենք, չէ՞

Վլադիկ Դանիելյանի համոզմամբ՝ Արցախի Սահմանադրության նոր նախագծում չկա զարգացման միտում:

«1988 թվականին մեր թիվ մեկ խնդիրը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերամիավորումն էր Հայաստանին: Մինչեւ այսօր, սակայն, չգիտեմ ում կախարդական փայտիկի միջոցով ու շնորհիվ վերամիավորման հարցը անուշադրության է մատնվում:

Ենթադրենք, թե մի օր այդ կախարդական փայտիկի ազդեցությունը սպառվի, եւ մի հրաշագործությամբ խնդիր դրվի երկու հանրապետությունների վերամիավորման: Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ ընդունել է Սահմանադրություն, որտեղ ընդունված պետական կառավարման ձեւը խորհրդարանականն է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, չգիտեմ ինչի, նախագահականն է ընտրում... белый ворон (սպիտակ ագռավ) ենք, չէ՞: Մենք ուզում ենք ամեն ինչով տարբերվենք, չէ՞: Հարյուր բան կարողանում եմ ընկալեմ, դա՝ ոչ,- ասում է նա եւ ավելացնում,- ես չեմ հավատում շինծու հեքիաթներին: Վախենամ՝ այս ամենը մնա որպես հեքիաթ...»:

Ապրիլյան պատերազմը քաղաքական առեւտուր էր

Ապրիլյան պատերազմի մեջ ես առեւտուր եմ տեսնում: Առեւտրի սուբյեկտը կար, մուշտարին կար, գինն էլ որոշված էր, ուղղակի հանձնողին չեն գտել: Քաղաքական առեւտրի կազմակերպիչները հույսները դրել էին տասնութ տարեկան տղաների վրա, սակայն, բարեբախտաբար, նրանց սպասումները չարդարացան: Նրանք չարաչար սխալվեցին: Նոր սերունդը մի քայլ առաջ է, քան նրանք. դրանում պետք է համոզված լինեն:

Ո՞ւմ հող տանք, որպես ի՞նչ տանք: Հող գրավողն ու հող տվողը նախագահները չեն: Ի՞նչ քառօրյա պատերազմ: Այդպիսի անուն տալը սրիկայություն է: Ապրիլի մի քանի օրվա գործունեությունն ենք պատերազմ որակում, ի՞նչ է՝ մինչեւ ապրիլը պատերա՞զմ չէր, հիմա պատերազմ չէ՞:

Դժբախտաբար, շատերն են ասում, որ Ղարաբաղը գտնվում է ոչ պատերազմ, ոչ խաղաղություն կարգավիճակում, բայց ես կոչ կանեի բոլորին՝ վերափոխել այդ արտահայտությունը, քանի որ մենք գտնվում ենք ե՛ւ պատերազմ, ե՛ւ խաղաղություն կարգավիճակում:

25 տարվա արված-չարվածը

Ապրիլյան պատերազմն ինձ համար ե՛ւ հաղթանակ էր, ե՛ւ պարտություն: Պատերազմը, որպես այդպիսին, միակողմանի դիտարկել հնարավոր չէ: Այս տարիների ընթացքում մենք ինքներս մեզ համոզել ենք, որ ունենք անպարտելի բանակ: Այնինչ՝ ապրիլյան դեպքերն ապացուցեցին, որ ահռելի գործ կա անելու անկոտրուն բանակ ունենալու համար:

Մենք որեւէ միջազգային կառույցի չենք ապացուցել, որ այս հողերը մեր պատմական Հայաստանի տարածքներն են: Ոչ քաղաքական դաշտում է աշխատանք կատարվում, ոչ էլ գաղափարական. այդ դեպքում ո՞ւմից ենք նեղանում:

Ուրախանում ենք, որ ասենք թե Մոզամբիկը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ընկեր, ենթադրենք՝ մի հրաշքով աշխարհի բոլոր պետությունները ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, հերթական քայլը ո՞րն է լինելու, ի՞նչ ենք անելու: Մինչ օրս մենք չունենք մշակված ռազմավարություն: Չկա հիմնավորված հայեցակարգ, կան ուղղակի պատեհ, տվյալ առիթին համապատասխան ինչ-որ նկրտումներ, որոնք ռազմավարություն անվանվելուց շատ հեռու են:

Պետք է ձեռնարկել ոչ թե Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված քայլեր, այլ հայ ժողովրդի անցյալը, ներկան ու ապագան պետք է ներկայացվի համաշխարհային հանրությանը: Մոզամբիկցին պետք է իմանա՝ հայն ով է, «վեր մեկալօրեն ծնված թորքը համարձակվեվէ պերանը պեցանե»:

Մինչ օրս չենք ուզում ազատվել պառռուսական ճղճիմ քաղաքականությունից: Ի՞նչ է արել ռուսը մեզ համար:

Черно-белый (սեւ-սպիտակ) մարդ եմ դարձել. «սվսվենե, պատառ սիպտկվաեն, միխրեգ սիպտակ, միխրեգ սեւ մարդկանց ընդունում չում»: Մեր թշնամուն զենք մատակարարող պետության հետ ուզում ենք բարեկամանալ, հանուն ինչի՝ ենք նրան ռազմավարական գործընկեր անվանում, որ ի՞նչ: Այսօրվա հետխորհրդային տարածքի ոչ մի երկրի վրա ռուսը էնքան չի մատը թափ տալիս, ինչքան Հայաստանի Հանրապետության իշխանությունների վրա:

«Վեչինչ չէ, վեր ղաթումը հադրութա բարբառավում խուսես՝,- ասում է նա ու գլխիս համաձայնության նշանից հետո շարունակում,- մի կարեւոր կետ էլ կա. երկրի կայացման թիվ մեկ խնդիրը տեղական ինքնակառավարման մարմինների կայացումն է, որը, դժբախտաբար, վերջին տասնինը տարիների ընթացքում դոփեց նույն տեղում»:

Ապագայի տեսլականը

Ապագան միայն ԼՂՀ ՊԲ-ի ուժեղացման մեջ է, որպեսզի պատերազմի այս փուլում, XXI դարում մենք չգոռանք խաղաղություն, այլ պարտադրենք խաղաղություն:

Հայաստանի զինված ուժերն այնքան պետք է ուժեղանան, որ Բաքուն կապիտուլիացիայի ակտ ստորագրի, այն էլ՝ Բաքվում: Դա է երազանքս:

Հ.Գ. - Հարցերս վերջացան, ինչ-որ բան ունե՞ք ավելացնելու:

- Հա, օգուտում քինինք մի կտոր հաց օտինք,- ասում է զրուցակիցս:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

ՀՕՄ-ը ՄԱԿ-ի հետ համատեղ իրականացնում է սահմանամերձ համայնքների զարգացման ծրագիր

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանն այսօր ընդունել է «Հայ օգնության միություն» (ՀՕՄ) կանանց բարեգործական կազմակերպության պատվիրակությանը: Ողջունելով պատվիրակության անդամներին՝ նախարարը բարձր է գնահատել ՀՕՄ-ի հասարակական, բարեսիրական, համահայկական գործունեությունը:

Նախարարը հյուրերից հետաքրքրվել է համայնքներում կազմակերպության կողմից իրականացվող ընթացիկ եւ հետագա ծրագրերի մասին: Հյուրերը նախարարին են ներկայացրել 2014-ից ի վեր ՀՀ Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերի սահմանամերձ համայնքներում իրականացվող համայնքային զարգացման ծրագրերի ձեռքբերումները, որոնց շրջանակներում իրականացվել են նախակրթարանների, դպրոցների, բուժկետերի վերանորոգման եւ կահավորման, ինքնահոս ոռոգման ջրով ապահովման, ճանապարհների խճապատման աշխատանքներ:

«Հայ օգնության միություն»-ը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ինչպես նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության հետ համատեղ իրականացնում է Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների զարգացման ծրագիր, որի շրջանակում նախատեսվում է առնվազն 90 ջերմատների կառուցում: ՀՕՄ-ն իր համաֆինանսավորման շրջանակներում արդեն ապահովել է 30 ջերմատներում կաթիլային ոռոգման համակարգերի տեղադրումը:

Կարեւորելով համայնքներում կազմակերպության կողմից տարվող բարեգործական աշխատանքները՝ նախարար Լոքյանը, հղում անելով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը, նշել է, որ բոլոր ծրագրերի հիմքում պետք է լինի հավելյալ արժեք ստեղծելու գաղափարը:

Հանդիպման ավարտին համայնքներում ՀՕՄ-ի աշխատանքներն ավելի թիրախային դարձնելու եւ նախարարության կողմից համապատասխան խորհրդատվություն ստանալու նպատակով կողմերը պայմանավորվել են հանդիպումներն առավել հաճախակի դարձնել:

arfd.am

Պատերազմի հուշերը հանգիստ չեն տալիս

Սվետլանա Բաղմանյանը ծնվել է Միրբաշիրի շրջանի Բեգում Սարով գյուղում 1951թ: Վերջինս Շահումյանի շրջանի Կարաչինար գյուղ հարս էր գնացել դեռեւս Արցախյան ազատամարտից առաջ՝ հազար երազանքով, եւ չէր էլ կարող պատկերացնել, որ մի օր ինքն է զենք վերցնելու հայրենիքի պաշտպանության համար եւ ի վերջո թողնելու է հարազատ գյուղը: Որպես նախապատերազմական լարվածության պատճառ՝ տիկին Սվետան 2 դեպք է առանձնացնում.

- Կարաչինարում մի մե՛ծ խանութ կար, էդ խանութին ասելիս են իլել Սելմակ: Ադրբեջանի Մյալավաթ գյուղի բնակիչներն էլ են ըտեղ խանութ գալիս ըլել, մենք էլ... Մի՛ կեծան ա ըլել արանքը, էրկու գյուղ, օգտվել ենք: Մի հատ ախճիգ՝ ադրբեջանցի գալիս ա էդ խանութ, հա, էս հա՛յն էլ ավտոն հետ-հետ տալով ոնց ա էղե՛լ, կպել ա էդ ախճիգ էրեխուն: Էդ երեխան էլ եղելա 14-16 տարեկան: Ադրբեջանցիք շխուր արեցին, որ մահացել ա...- Չէր մահացել: Էդ ամեն ինչը եղել ա հուլիս ամսին:

Տիկին Սվետան համոզված է՝ երեխան չէր մահացել. դա ադրբեջանցիների կողմից պատերազմ հրահրելու առաջին քայլն էր: Իսկ երկրորդը պատահել է օգոստոս ամսին, երբ Կիրովաբադ-Շահումյան ավտոճանապարհին ադրբեջանական ավտոմեքենան հարվածել է մարդատար ավտոբուսին, որի հետեւանքով 1 հայ երեխա է մահացել: Այդ ժամանակ արդեն յուրաքանչյուր գյուղ իր ջոկատն է կազմել, որին անդամագրվել են նաեւ Սվետլանան եւ ամուսինը: Պատերազմի ողջ ընթացքում տիկին Սվետան ամուսնու կողքին էր.

- Էն նույն րոպեին, որ մընձ թիկունք չունենք, էն կնգա մի հատ հասցրած լուցկին տղամարդկանց հետի մեծ նշանակություն ուներ:

Պատերազմի հուշերը հանգիստ չեն տալիս: Արցախում ամեն ինչ է հիշեցնում ապրած ծանր ժամանակների մասին: Տիկին Սվետան պատմում է, որ վերջերս Ստեփանակերտում հինգհարկանի մի շենք իրեն շատ ծանոթ է թվացել, կանգնել է, երկար նայել շենքին: Պատերազմի ժամանակ այդ շենքի նկուղը որպես բուժկետ էր ծառայում, որտեղ մի ժամանակ բուժում է ստացել նաեւ իր ամուսինը: Հիմա նույն տեղում խանութ է: Ներս է մտել, ուշադիր նայել, ու երբ վաճառողուհին հարցրել է, թե ինչո՞վ կարող է օգնել, բառերն անզոր են եղել բացատրել պատերազմի մասնակից կնոջ ապրումները: Պատմել է, հիշել, ցավացել պատերազմից մնացած հուշերով:

Իրեն մնացած դառը հուշերից հետո անգամ տիկին Սվետան չի ցանկացել ապրել Արցախից հեռու. ընտանիքով տեղափոխվել են Նոր Բրաջուր գյուղ: Հարցնում եմ, թե ինքը ե՞րբ եկավ Բրաջուր, հիմա ինչո՞վ է զբաղվում...

- Մենք Բրաջուր 2005 թվի հունիսին եկանք: Հող ենք մշակե՛լ, անասուն պահել: 3 երեխա,12 թոռ ունեմ: Հիմա էլ էս գործին եմ (Նոր Բրաջուրի ակումբում հավաքարար է աշխատում):

Շնորհակալություն եմ հայտնում ու հրաժեշտ տալիս, իսկ տիկին Սվետայի աչքերում փայլում է կորցրած հայրենիքի անպատմելի կարոտը:

Արաքսյա ՄԻՐԶՈՅԱՆ

Փաուերլիֆթինգի չեմպիոնը



Փաուերլիֆթինգը ուժային մարզաձեւ է, որի իմաստը կայանում է մարզիկի համար ամենածանր զանգվածով ծանրաձողի հաղթահարման մեջ: Փաուերլիֆթինգը անվանում են նաեւ եռամարտ: Այդ անվանումը պայմանավորված է առաջնությունների ժամանակ կիրառվող մարտատեսակով, որի մեջ մտնում է երեք վարժություն՝ կքանիստ՝ ծանրաձողը մեջքի (ավելի կոնկրետ թիկունքի վերին մասի) վրա, հրում ծանրաձողով՝ պառկած վիճակից հորիզոնական հարթակի վրա, պոկում գետնից: Արդյունքում հաղթահարված քաշերի գումարով որոշվում է մարզիկի որակավորումը: Փաուերլիֆթինգում, ի տարբերություն բոդիբիլդինգի, կարեւոր են ուժային ցուցանիշները, ոչ թե մարմնի գեղեցկությունը: Շատ բոդիբիլդիստներ, ինչպիսիք են Առնոլդ Շվարցնեգերը, Ռոնի Քոուլմենը, Ֆրանկո Կոլոմբոն, Եվգենի Միշինը եւ այլոք, իրենց մարզական կարիերան սկսել են փաուերլիֆթինգից կամ պարապել են միաժամանակ երկու մարզաձեւով: Ամբողջ աշխարհում ուժային եռամարտը լայնորեն ճանաչված է եւ օլիմպիական մարզաձեւ դառնալու միտում ունի:

Հայաստանում եւ Արցախում փաուերլիֆթինգը եւս տարածված է եւ դրանով պարապող մարզիկների կյանքի անբաժանելի մասն է կազմում:

Երրորդ տարին է, ինչ մեր զրուցակից, 27-ամյա Հարութ Ավանեսյանը զբաղվում է այս մարզաձեւով եւ բավականին հաջողություններ ունի: 2016թ. նոյեմբերի 20-ին Երեւանում կայացած փաուերլիֆթինգի ՀՀ առաջնության հաղթող է ճանաչվել: 110 կգ քաշային կարգում Հարութ Ավանեսյանը երեք եռամարտում 680 կգ է հաղթահարել: Արցախից մասնակցած 9 մարզիկից 7-ին, այդ թվում՝ Հարութին, հաջողվել է զբաղեցնել առաջին մրցանակային, իսկ 2-ին՝ երկրորդ մրցանակային տեղ:

- Շատերի մոտ՝ միայն լսելով, թե ինչ քաշերի հետ եք գործ ունենում, սարսուռ է նկատվում: Ձեզ ոչինչ չի՞ վախեցնում նախընտրած մարզաձեւի մեջ:

- Վախը բոլորին հատուկ ինքնապաշտպանական ռեակցիա է, բնականաբար, ոչ մեկն էլ զուրկ չէ դրանից: Վախը հնարավոր է հաղթահարել երկարատեւ մարզումների շնորհիվ: Ինչպես որ վախ լինում է բոլոր մարդկանց մոտ որեւէ ծանր առարկա վերցնելուց առաջ, իմ մոտ էլ սկզբնական շրջանում այդպիսի զգացողություն կար, թե ես 200 կգ-ից ավել չեմ կարող բարձրացնել, բայցեւայնպես՝ եկավ մի պահ, երբ կամքի ուժս հաղթեց բնական վախին: Սկզբում կարծում էի, թե միայն սիրողական կարող էի պարապել, բայց երբ մի քիչ հմտացա, ցանկություն ունեցա նաեւ պրոֆեսիոնալ մակարդակով զբաղվել նախընտրածս սպորտով: Դա կարծես սպորտային մոլուցք (ազարտ) է դարձել:

- ՀՀ առաջնության ժամանակ ունեցած եռամարտի էտապներից ո՞րն էր ամենադժվարը:

- Առաջին էտապում՝ կքանիստի ժամանակ 260 կգ բարձրացրեցի, այդքան էլ դժվար չէր, երկրորդում՝ պառկած վիճակից 160 կգ հաջողվեց հաղթահարել, որը ամենադժվարն էր, իսկ երրորդում՝ 260 կգ գետնից պոկում կատարեցի: Ընդհանուր գումարով արդյունքը վատ չէ, բայց ինձ ընդամենը 20 կգ չհերիքեց սպորտի վարպետի կոչման արժանանալու համար: Գուցե հաջորդ անգամ ավելի բարձր ցուցանիշներով հանդես գամ:

- Ի՞նչ է Ձեզ համար փաուերլիֆթինգը եւ ի՞նչ է պետք այդ մարզաձեւով պարապել սկսելու համար:

- Նախքան պարապել սկսելը պետք է հասկանալ՝ ուզո՞ւմ ես պրոֆեսիոնալ մարզիկ դառնալ, թե չէ, եւ դրանից կախված՝ համապատասխան մոտեցում ցուցաբերել: Սպորտը ծանր աշխատանք է պահանջում մեծ քաշերի հետ: Մի կողմից դա լի է վնասվածք ստանալու վտանգով, բայց եւ գայթակղիչ՝ ամեն ինչ անել հանուն հաղթանակի, մյուս կողմից՝ մկանների եւ ամբողջ օրգանիզմի ամրացում, վստահություն ուժերիդ, ֆիզիկական լավ կոփվածք: Ամեն դեպքում էլ լավ մասնագիտացված մարզիչ է պետք, որը կսովորեցնի տեխնիկան, կօգնի կազմել պարապմունքների գրաֆիկը եւ պլանը: Շնորհակալ եմ իմ մարզիչ, Եվրոպայի եւ աշխարհի փոխչեմպիոն Արկադի Զաքարյանին. շատ բան եմ նրանից սովորում:

- Նախքան այս մարզաձեւով զբաղվելը՝ Դուք նաեւ երկար տարիներ, սկսած մանկությունից, հաճախել եք թեյքվանդոյի պարապմունքների: Արդյո՞ք պետք է փաուերլիֆթինգով պարապելու համար նախորոք կոփված լինել, եւ ո՞ր տարիքն է ցանկալի համարվում դրանով մարզվել սկսելու համար:

- Պարտադիր չէ այլ մարզաձեւում կոփվել փաուերլիֆթինգի գնալու համար, բայց եթե ամուր հիմք կա, դա միանշանակ դրական է ազդում պարապմունքների վրա: Կարելի է ասել, թե ես պատրաստ էի՝ որպես մարզիկ: Մարզիչն էլ էր դա նկատել: Փաուերլիֆթինգում կոնկրետ պահանջներ կան: Մարզիկը պետք է ուժեղ մկանային համակարգ ունենա, լինի դիմացկուն, ուժ ունենա, ընդ որում՝ ինչպես ոտքի, ձեռքի, կրծքավանդակի, մեջքի, այնպես էլ՝ կամքի ուժ: Մարզիչս նկատել էր, որ ոտքերի մկաններս ավելի լավ են զարգացած. երեւի թեյքվանդոյից էր: Պարապել կարելի է սկսել ինչպես պատանեկան, այնպես էլ հասուն տարիքում, կարեւորը՝ խելքով եւ կամքի ուժով:

- Հատուկ սննդակարգ կա՞, որին պետք է հետեւեք:

- Ամեն ինչ մարզիկից է կախված: Կարեւոր է ճիշտ սննդակարգին հետեւել եւ սնվել ծախսված էներգիային համապատասխան: Ճիշտ եւ ժամանակին սնվելը լրացնում է էներգիայի կորուստը, օգնում է մկանները վերականգնելուն: Աշխատում ենք, որ սնունդը վիտամիններով, սպիտակուցներով, ածխաջրերով հարուստ լինի եւ բարձր կալորիականություն ունենա: Գոյություն ունեն հատուկ վիտամիններ, որոնց օգտագործումը նույնպես նպաստում է օրգանիզմի մկանային համակարգի ուժեղացմանը, բայց ցանկալի է դրանք չչարաշահել եւ հետեւել «ամեն ինչ չափի մեջ» սկզբունքին:

- Փաուերլիֆթինգիստի համար գոյություն ունի՞ քաշի հաղթահարման սահմանափակում:

- Ինչքան հզոր լինի մարզիկը, նրանից հզորներ էլ կգտնվեն: Մեր մարզաձեւում քաշի բարձրացման առումով սահմանափակումներ չկան, ռեկորդներ կան: Կարեւոր չէ ռեկորդների հասնել այս մարզաձեւում, բայց մարզիկը հստակ պետք է իմանա՝ ինչի է նա ձգտում կյանքում: Իսկ այն լուրջ առավելությունները, որոնք ունեն փաուերլիֆթինգիստները, պետք է կարողանալ ճիշտ եւ նպատակային օգտագործել ինչպես սպորտում, այնպես էլ կյանքում:

Փաուերլիֆթինգը միայն քաշի հաղթահարում չէ: Բացի սպորտային մոլուցքից, սա նաեւ կյանքում է օգնում մոբիլիզացնել ինքդ քեզ եւ լրիվությամբ դրսեւորվել կարճ ժամանակում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՅԴ Արցախի կառույցն իր խորին վշտակցությունն է հայտնում ՀՅԴ Արցախի «Միջնաբերդ» կոմիտեության անդամ Ռուբեն Հովսեփյանի ընտանիքին ու հարազատներին՝ կրած անփոխարինելի կորստի կապակցությամբ:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան